ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

I

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ազգային փոքրամասնութիւնները բաժանելու է երեք խմբի։

Առաջին՝ այն փոքր ազգերը, որոնք ունին իրենց պատմական երկրամասը, ուր ամբողջովին կամ մեծամասնութեամբ նստած են դարերից ի վեր։

Երկրորդ՝ նրանք, որ ցեղագրական-մշակութային պատկանում են Անդրկովկասի ոչ թէ փոքր, այլ այսպէս կոչուած մեծ ազգերին։ Սրանցից հայերը եւ թաթարները իրենց ազգային-պետական երկրամասից (Հայաստան, Ատրբէջան) դուրս եւս կազմում են աչքառու թիւ, մասամբ ունենալով սեփական հողամաս, մասամբ էլ ցրուած լինելով տուեալ երկրի բնիկ տարրի մէջ։

Երրորդ՝ ցեղագրական այն տարրերը, որոնք Անդրկովկասի բնիկ ժողովուրդների թուին չեն պատկանում, չունին իրենց ազգային հողամասը եւ ամէն տեղ կազմում են փոքրամասնութիւն։

Առաջին խմբին են պատկանում՝ մինգրելները, օսերը, արխազները եւ աջարացիները Վրաստանում, ինչպէս եւ թաթերը, թալիշները, քրդերը եւ Զանգեզուրի լեռնականները՝ Ատրբէջանում։ Այսօրուայ Հայաստանը իր մէջ չի հաշուում օտարացեղ տարր, որ ունենար իր որոշ հողամասը։

Ցիշեալ փոքր ազգութիւններից արխազները, օսերը եւ աջարացիները ունին իրենց ազգային-հողային ինքնավարութիւնը Խորհրդային Վրաստանի սահմաններում, իսկ մինգրելները՝ ոչ։ Ատրբէջանի սահմաններում ապրող թաթերը, թալիշները, քիւրդերը, նաեւ Մուղանի ռուսները չունին ինքնավարութիւն։

Երկրորդ խմբին պատկանող տարրերն են՝ հայերը եւ թաթարները։

Հայաստանից դուրս բաւականաչափ հայեր կան Վրաստանում եւ Ատրբէջանում, ինչպէս եւ վերջինից դուրս որոշ թուով թաթարներ կան Հայաստանում եւ Վրաստանում։ Իսկ վրացիները, ընդհակառակը, գրեթէ ազգովին կենդրոնացած են իրենց բնաշխարհում, նրանք փոքրամասնութիւններ չունին ոչ Հայաստանում եւ ոչ էլ Ատրբէջանում։

Հայ եւ թաթար փոքրամասնութեանց որոշ մասերը տուեալ հարեւան հանրապետութեան մէջ ունին իրենց հողամասը, օրինակ՝ հայերը Ղարաբաղում եւ Զաւախքում, մասամբ էլ թաթարները՝ Բորչալուում։ Եւ սակայն մինչ Ղարաբաղը ունի, թէպէտեւ խուզուած սահմաններով, իր ինքնավարութիւնը, Զաւախքը չունի։

Եւ սակայն Զաւախքից եւ Ղարաբաղից դուրս եւս բաւական թուով հայեր են մնում Վրաստանում եւ Ատրբէջանում, ինչպէս նաեւ թաթարներ՝ Հայաստանում ու Վրաստանում։ Ահա դրանք եւս ազգային փոքրամասնութիւններ են, բաւի խսկական առումով, այսինքն՝ ցրուած են, չունին իրենց ազգային երկրամասը։ Ցար եւ նման վիճակ ունին ողջ Անդրկովկասում նաեւ եկուոր տարրերը՝ ռուսներ, գերմանացիներ, հրէաներ, պարսիկներ, եւրոպական զանազան ազգեր, եւայլն։

Սեփական երկրամաս ունեցող ցեղագրական տարրերը, եթէ նրանք անմիջապէս սահմանակից են մայր հատուածի հանրապետութեան (Ղարաբաղի եւ Զաւախքի հայութիւնը), անպայման միացուելու են վերջինին, իսկ ոչ-սահմանակիցները ստանալու են իրենց ազգային-հողային ինքնավարութիւնը եւ կամ շարունակելու են պահպանել նրա գոյութիւնը (օրինակ՝ Նախիջեւանը Հայաստանի ապագայ սահմաններում)։ Նրանց ցրուած հատուածների, ինչպէս նաեւ առհասարակ Անդրկովկասի երեք հանրապետութեանց մէջ ապրող ազգային փոքրամասնութեանց համար սակայն ի կեանս կոչելու է ազգային-մշակութային ինքնավարութիւն։

Տեսնենք, թէ ի՞նչ թիւ են կազմում ազգային փոքրամասնութիւնները այսօրուան Անդրկովկասում։

Հայերը, վրացիները եւ թաթարները միասին կազմում են Անդրկովկասի ազգաբնա-